**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան 12.11.2021թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
# ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
# թիվ ՍՑ-LO-2021/298

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարան
Մասնակից՝ «Պստո» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Պստո» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Վանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» գնանշման հարցման ընթացակարգ, Լոռի Բերդ համայնքի Լոռի բերդ, Սվերդլով, Բովաձոր, Կողես, Հովնանաձոր բնակավայրերի ներհամայնքային ճանապարհների կանոնավոր տուֆ քարով սալարկման աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/03»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.10.2021թ.-ի թիվ 26/26-1/16962-2021 գրությամբ «Պստո» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

## ՊԱՐԶԵՑ

### 1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի 11.10.2021թ. 641 գրության հիման վրա, 18.10.2021թ.-ին «Պստո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 18.10.2021թ.-ին:

19.10.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/298 համարի ծածկագիրը:

26.10.2021թ.-ին և 12.11.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 26.10.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.11.2021թ.-ին:

### 2. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 11.10.2021թ.-ի թիվ 641 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

*«Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի և «Պստո» ՍՊԸ-ի միջև 19.07.2021թ. կնքված ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/03 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.15 կետի պահանջները՝ Լոռի Բերդի համայնքապետարանը միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը:*

*Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը 11.10.2021թ.միաժամանակ ուղարկվել է «Պստո» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեին և հրապարակվել է gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:*

*Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 13.04.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետը՝ խնդրում եմ Ձեզ նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Պստո» ՍՊԸ-ին ներառելու գործընթաց:»:*

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Պստո» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 22.10.2021թ.-ի թիվ 661 գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

*«Լոռի Բերդի համայնքապետարանի և «Պստո» ՍՊԸ-ի միջև 19.07.2021թ. կնքված ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/03 ծածկագրով պայմանագիրը լուծելու և «Պստո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացի (ՍՅ-ԼՕ-2021/298 ընթացակարգ) գծով «Պստո» ՍՊԸ-ի դիրքորոշմանը ի պատասխան հայտնում եմ հետևյալը.*

*Կապալառուի կողմից աշխատանքներ չեն կատարվել, առավել ևս, Լոռի Բերդի համայնքապետարանի կողմից որևէ խոչընդոտ չի ստեղծվել դրանց կատարման համար, իսկ պայմանագիրը միակողմանի լուծվել է ոչ թե սահմանված ժամկետում աշխատանքները չկատարելու, այլ պայմանագրի 8.15 կետով սահմանված ժամկետում համաձայնագիր չներկայացնելու հիմքով:*

*Ինչ վերաբերում է պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ ընկերությանը տեղյակ չպահելուն և չհրապարակելուն՝ նշեմ, որ այդ մասին 11.10.2021թ. ծանուցում է ուղարկվել «Պստո» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին և նույն օրը հրապարակվել է gnumner.am հասցեով ինտերնետային կայքում, որի հիմքերը առկա են Լոռի Բերդի համայնքապետարանի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 11.10.2021թ. թիվ 641 գրությանը կից փաթեթում:»:*

Պատվիրատուն 27.10.2021թ.-ի թիվ 673 գրությամբ հավելել է նաև հետևյալը.

*«Լոռի Բերդի համայնքապետարանի և «Պստո» ՍՊԸ-ի միջև 19.07.2021թ. կնքված ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/03 ծածկագրով պայմանագիրը լուծելու և «Պստո» ՍՊԸ-ին գնումների*

*գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացի (ՍՑ-ԼՕ-2021/298 ընթացակարգ) գծով 26.10.2021թ. տեղի ունեցած նիստում «Պստո» ՍՊԸ-ի ներկայացուցչի ներկայացրած փաստարկներին ի պատասխան հայտնում եմ հետևյալը.*

*1. Վերը նշված գնումը իրականացվելու էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, և քանի որ աշխատանքները կատարվելու էին սուբվենցիոն ծրագրով՝ պայմանագրի հավելված N 3-ում ըստ չափաբաժինների ներառվել են ծրագրի համայնքի մասնաբաժնին (35%) գումարները, իսկ աղյուսակի ներքևում նշվել է, որ ֆինանսական միջոցներ նախատեսելու դեպքում համաձայնագրի հետ միաժամանակ կկազմվի նոր ժամանակացույց՝ ամբողջ գումարի չափով: Պայմանագրի հավելված N2-ում աշխատանքների կատարման սկիզբ սյունակում նշվել է. «համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից»:*

*10.09.2021թ. Լոռի Բերդի համայնքապետարանի կողմից պայմանագրում փոխոխություն կատարելու մասին համաձայնագիր կնքելու առաջարկով գրություն և համաձայնագրի նախագիծը ուղարկվել է «Պստո» ՍՊԸ-ին: Ինչ վերաբերում է գրության մեջ համաձայնագիր կնքելու ժամկետ չնշելուն, ինչպես ներկայացրեց ՍՊԸ-ի ներկայացուցիչը, ապա այն արտացոլված է պայմանագրի 8.15 կետում և համաձայնագրում հղում է կատարվել հենց այդ կետին:*

*2. «Պստո» ՍՊԸ-ի ներկայացուցչի այն պնդմանը ի պատասխան, որ ընկերության կողմից կատարվել են շինարարական աշխատանքներ, որի դիմաց վճարում չի կատարվել, հայտնում եմ, որ դա չի համապատասխանում իրականությանը, աշխատանքներ չեն կատարվել, կատարողական ակտ չի ներկայացվել և հարկային հաշիվ դուրս չի գրվել, որոնց հիման վրա է կատարվում վճարումը:*

*3. Ըստ «Պստո» ՍՊԸ-ի ներկայացուցչի պարզաբանման Լոռի Բերդի համայնքապետարանի կողմից ընկերությանը չի ծանուցվել պայմանագրի միակողմանի լուծման մասին և այն չի հրապարակվել gnumner.am հասցեով ինտերնետային կայքում, որը նույնպես չի համապատասխանում իրականությանը: 11.10.2021թ. ծանուցում է ուղարկվել «Պստո» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին և նույն օրը հրապարակվել է gnumner.am կայքում:*

*Կից ներկայացվում են վերը նշվածը հիմնավորող հետևյալ փաստաթղթերը.*

*1. 19.07.2021թ. կնքված ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/03 ծածկագրով պայմանագիրը*

*2. Համաձայնագիր կնքելու վերաբերյալ Լոռի Բերդի համայնքապետարանի 10.09.2021թ. թիվ 558 գրությունը,*

*3. Համաձայնագրի նախագիծը*

*4. Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ 11.10.2021թ. թիվ 639 գրությամբ ներկայացված ծանուցումը:*

*5. Գնումների համակարգողի էլեկտրոնային հասցեից «Պստո» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին ուղարկված ծանուցումները հավաստող էջերի screen-shot-երը:»:*

**3. <u>«Պստո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 19.10.2021թ.-ին գրությամբ դիմել է «Պստո» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.10.2021թ.-ի թիվ 26/26-1/16962-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 21.10.2021թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

*«Համաձայն Լոռի Բերդ համայնքի և «Պստո» ՍՊԸ միջև կնքված պայմանագրի Լոռի բերդ հայանքապետարանը պետք էր կատարեր տարածքների հանձնում ընդունում, որը դեռ մինչ օրս չի կատարվել, պետք էր ներկայացներ շին թույլատվություն, որը ևս դեռ մինչ օրս չի տրամադրել, չնայած դրան ընկերությունը հասկանալով աշխատանքների կարևորությունը սկսել էր հողային աշխատանքների կատարումը, ինչպես նաև Լոռի բերդի համայնքապետարանի կողմից կատարվում էր այլ արհեստական խոչընդոտներ: Չնայած վերը նշվածի ընկերությունը դեռևս կատարում և կազմակերպում է աշխատանքները, քանի որ աշխատանքների կատարման ժամկետը սահմանած է մինչև 30 նոյեմբերի 2021թ., քանի որ տվյալ աշխատանքների կատարման համար այսօրվանից սկսած բավարար ժամանակ է միչև 30 նոյեմբերի 2021թ. ավարտել աշխատանքները:*

*Համաձայն գնումների մասին օրենքի պայմանագրի լուծումը պետք է հրապարակվի www.gnumner.am կայքում, որը համայնքապետարանի կողմից չի կատարվել և ընկերությունը տեղյակ չի պայմանագրի լուծման վերաբերյալ:*

*Հիմք ընդունելով վերոգրյալը ընկերությունը համարում է Լոռի բերդի համայնքապետարանի կողմից գործողությունները ոչ իրավաճափ:»:*

Մասնակիցը, 26.10.2021թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

*«Տեղեկացնում եմ Ձեզ, որ www.gnumner.am կայքում Պայմանագրի միակողմանի լուծելու մասին ծանուցումներ բաժնում չկա ծանուցում և կամ հայտարարություն Լոռի Բերդ համայանքապետարանի կողմից պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ:*

*Կնքված և ստորագրված պայմանագրում արդեն իսկ նախատեսված են ֆինանսական միջոցներ և հետայսու ֆինանսական միջոցներ նախատեսված են, ֆինանսական միջոցներ պետք չեր նախատեսելն համաձայնագիր կնքելու անհրաժեշտություն չկար:*

*Երեք համայնքներում աշխատանքներ իրականացվել են հողային աշխատանքները ամբողջությամբ, ավազի լցման աշխատանքները ամբողջությամբ, մնացել է տեղադրել միայն տուֆե քարերը, և պատվիրատուի կողմից վճարում չէր իրականացվում, պահանջում էին կատարել տուֆի տեղադրումը, որից հետո կկատարվի վճարումներ, որը ստեղծում է արհեստական խոչընդոտներ:»:*

Մասնակիցը, 08.11.2021թ.-ին ներկայացված գրությամբ, հավելել է հետևյալը.

*«Լոռի Բերդ համայնքապետարանի կողմից ներկայացվել է լրացուցիչ համաձայնագիր, որտեղ նախատեսվել է այնպիսի գումարներ, որը գնումների պլանով նախատեսված չի եղել (Կից ներկայացվում է գնումների պլանը), որից հետևում է, որ լրացուցիչ համաձայնագիրը ոչ իրավաչափ է:*

*Կրկին անգամ նշեմ, որ Լոռի Բերդ համայնքի և «Պստո» ՍՊԸ միջև կնքված պայմանագրի Լոռի Բերդ հայանքապետարանը պետք էր կատարեր տարածքների հանձնում ընդունում, որը դեռ մինչ օրս չի կատարվել, չնայած դրան ընկերությունը հասկանալով աշխատանքների կարևորությունը սկսել էր հողային աշխատանքների կատարումը, ինչպես նաև Լոռի Բերդի համայնքապետարանի կողմից կատարվում էր այլ արհեստական խոչընդոտներ:*

*Համաձայն գնումների մասին օրենքի պայմանագրի լուծումը պետք է հրապարակվի www.gnumner.am կայքի ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ բաժնում, որը համայնքապետարանի կողմից չի կատարվել և ՀՀ գնումների մասին օրենքով պատվիրատուն, այսուհետ համայնքապետարանը պարտադիր պետք էր հրապարակեր ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ բաժնում պայմանագրի լուծման վերաբերյալ:*

*Հիմք ընդունելով վերոգրյալը ընկերությունը համարում է Լոռի Բերդի համայնքապետարանի կողմից գործողությունները ոչ իրավաճափ:»:*

**4. <u>ՍՑ-LO-2021/298 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի կողմից Լոռի Բերդ համայնքի Լոռի բերդ, Սվերդլով, Բովաձոր, Կողես, Հովնանաձոր բնակավայրերի ներհամայնքային ճանապարհների կանոնավոր տուֆ քարով սալարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով 16.06.2021թ.-ին հայտարարվել է «ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի մաս կազմող գնանշման հարցման մասին հայտարարությամբ սահմանվել է, որ սույն գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի ենթակետի պահանջներին համապատասխան:

iii. Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) Հավելված 7-ով՝ պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի Հավելված 3-ով՝ վճարման ժամանակացույցով (այսուհետ՝ Հավելված 3) սահմանվել է, որ վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ կկազմվի նոր ժամանակացույց ամբողջ գումարի չափով՝ որպես դրա անբաժանելի մաս:

iv. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի և «Պստո» ՍՊԸ-ի միջև 19.07.2021թ.-ին կնքվել է թիվ «ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

v. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի և «Պստո» ՍՊԸ-ի միջև թիվ «ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիր (այսուհետ նաև՝ Համաձայնագիր) չի կնքվել:

vi. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 11.10.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին 11.10.2021թ.-ի թիվ 639 ծանուցման համաձայն՝ 19.07.2021թ.-ին կնքված «ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝

Պայմանագիր) 8.15 կետի համաձայն՝ «Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է»:

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի կողմից 10.09.2021թ.-ին համաձայնագիր կնքելու վերաբերյալ ծանուցում է ուղարկվել «Պստո» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին, սակայն ընկերության կողմից չի ներկայացվել համաձայնագիրը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 8.15 կետը՝ Լոռի Բերդի համայնքապետարանը միակողմանիորեն լուծել է Պայմանագիրը:

## 5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.10.2021թ.-ի թիվ 26/26-1/16962-2021 գրությամբ «Պստո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ հոդվածների համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում

որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ

իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 8.15-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգպատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունն անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել

մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի կողմից Լոռի Բերդ համայնքի Լոռի բերդ, Սվերդլով, Բովաձոր, Կողես, Հովնանաձոր բնակավայրերի ներհամայնքային ճանապարհների կանոնավոր տուֆ քարով սալարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով 16.06.2021թ.-ին հայտարարված «ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի և Մասնակցի միջև 19.07.2021թ.-ին կնքվել է թիվ «ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/03» ծածկագրով պետական գնման պայմանագիրը: Ընթացակարգի հրավերի մաս կազմող գնանշման հարցման մասին հայտարարությամբ սահմանվել է, որ սույն գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի ենթակետի պահանջներին համապատասխան, իսկ արդեն Հավելված 3-ով՝ վճարման ժամանակացույցով սահմանվել է, որ վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ կկազմվի նոր ժամանակացույց ամբողջ գումարի չափով՝ որպես դրա անբաժանելի մաս:

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի կողմից 10.09.2021թ.-ին համաձայնագիր կնքելու վերաբերյալ ծանուցում է ուղարկվել «Պստո» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին, սակայն ընկերության կողմից չի ներկայացվել համաձայնագիրը:

Պատվիրատուն, ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 8.15 կետը, միակողմանիորեն լուծել է կողմերի միջև կնքված Պայմանագիրը՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին

ծանուցումներ» բաժնում հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին 11.10.2021թ.-ի թիվ 639 ծանուցումը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Պստո» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի 11.10.2021թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նույն օրը հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Պստո» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.10.2021թ.-ի թիվ 26/26-1/16962-2021 գրությամբ «Պստո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/298 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Պստո» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**